ենթադրել կարող է, թէ նա գերման չէ, այլ օտար մարդ։

Ապա նա ամուսնացել է մի գերմանուհու հետ եւ իր տնային կենցաղը բոլորովին գերմանական ձեւով յարմարցրել»

Արովեան ինքն իր տոհմի եւ ծնողների մասին հետեւեալ տեղեկութիւններն է հաղորդել Հաքստհաուզէնին, մասամբ բանաւոր եւ մասամբ գրաւոր կերպով։ Արովեան Հաքստհաուզէնի տրամադրութեան տակ է դրած եղել նաեւ իր գրի առած «Պատանեկան Յիշողութիւնները», որոնք պարունակելիս են եղել հարուստ տեղեկութիւններ այն բոլոր խնդիրների շուրջը, որոնք կազմում են Հաքստհաուզէնի հետաքրքրութեան առարկան։

Ահա թէ ի՞նչ է ասում այդ մասին գերման գիտնական ճամբորդը.—

«Ես այստեղ առաջ կը բերեմ Արովեանի ընտանեկան կեանքից եւ պատանեկան յիշողութիւններից մի քանի գծեր ա՛յնպէս, ինչպէս որ նա ինքն է ինձ հաղորդել, մասամբ գրաւոր եւ մասամբ բանաւոր կերպով։ Այդ գծերը կը նպաստեն հայ ժողովրդական կեանքի եւ նկարագրի վրայ պայծառ լոյս նետելուն։

«Քանաքեռի բոլոր ծերունիները տակաւին հպարտութեամբ եւ ակնածութեամբ են յիշում (Հ–ն եղել է նաեւ Քանաքեռում) այն գրաւիչ անձնաւորութեան մասին, որ ապրել է նրանց մէջ։ Դա՝ Արովեանի պապն է եղել, մեծ հայրը։ Մի բարձրահասակ, գեղեցկադէմ մարդ, ամբողջ էութեամբ ինքնավստահ, բայց եւ հեզահամբոյր ու բարեկամասէր մէկը։ Նա տեղնուտեղը եռանդ է եղել, ամէն լաւ բանի համար պատրաստակամ, ողջ էութեամբ գանձ ու հարստութիւն ամէն մի կարիքաւորի համար, ինչպէս եւ՝ երջանիկ ամուսին եւ ընտանիքի հայր։ Նա հարուստ է եղել, բայց եւ՝ վերին աստիճանի ողորմասէր, կարեկից ու հիւրասէր (ո՞րչափ յիշեցնում են այս խօսքերը՝ «Վէրք Հայաստանի»ն)։ Այսպէս ահա, մեծ յարգանք էր վայելում նա հայերի եւ թաթարների, անգամ ականաւոր պարսիկների մօտ։ Նա գործատեղիներ եւ կրպակներ ունէր Երեւանում, որ եւ վարձու էր տալիս, ապա նաեւ՝ մի մեծ հողամաս, մանաւանդ՝ հիանալի մրգաստաններ։ Այդիներից մէկը, որ գտնւում էր Երեւանից Թիֆլիս տանող ճանապարհի վրայ ու գրեթէ մէկ ժամուայ տարածութիւն էր գրաւում, եւ որը լիքն էր ընկոյզի, խաղողի, կեռասի, սալորի, ծիրանի, թութի եւ փշատի հարիւրաւոր ծառերով ու խաղողի չքնաղ մարգերով, նրա կողմից յատկացուած էր այն նպատակին, որ ուրիշների, օտարների կողմից վայելուէր եւ օգտագործուէր։ Երեքից մինչեւ չորս այգեպաններ յատուկ նշանակուած էին՝ այդին մշակելու, կարգուկանոնի մէջ պահելու եւ վերահսկելու համար։ Մօտից գնացող ամէն մի անցորդի թոյլ էր տրուած այդին ներս մտնել եւ ուտել կամ հետը տանել՝ որչափ որ սիրտը կ'ուզէր։ Բոլոր պտուղները, որ իրենք իրենց եւ կամ քամուց վայր կը թափուէին, ամէն առաւօտ կողովների մէջ կը հաւաքուէին ու այգու դրան մօտ կը դրուէին, որպէսզի ամէն մէկը, որ եթէ բանէ տեղեկութիւն չունէր, թէ իրաւունք ունի ձրիապէս օգտուելու այգու բարիքներից, մասնակցութիւն ունենար այդ վայելքին։ Իսկ ինչ որ անցորդները եւ այգու պահապանները չէին կարող ուտել, այդ էլ գալիս–տանում էին լեռնային գիւղերի հայերը եւ թաթարները, որոնք պտղատու այգիներ գրեթէ չունէին, կամ այն է՝ խիստ կլիմայի պատճառով, եւ կամ որովհետեւ նրանց պակասում էր այդեմշակութեան հասկացողութիւնը եւ ցանկութիւնը։ Այդ այգու ձմերային պտուղները, որ ամառը ուտել կարելի չէ, ինչպէս եւ խաղողը պահում էին յատուկ մառանում, որի դուռը եւս ամէն մարդու առաջ բաց էր։

Այս ամէնին Հաքստհաուզէն անմիջապէս կցում է.

«Արովեանի յուշագրքից բառացի քաղում եմ հետեւեալը. «Տակաւին այժմ էլ մեծ չափերով զոյութիւն ունի մեր այգուց ձրիաբար օգտուելու այդ սովորութիւնը։ Բայց իմ ծնողները գանգատւում են արցունքով, որ իրենք այլեւս բաւականաչափ հարուստ չեն, որ կարող լինին այն մարդկանց պահել՝ այգու մշակութեան եւ հսկողութեան համար, որ՝ այլեւս չեն կարող այն անել, ինչ անում էր (մեծ) հայրը»։

Եւ յետոյ Հաքստհաուզէն շարունակում է իր պատմութեան թելը, անտարակոյս նոյն աղբիւրի (Արովեանի յուշատետրի) վրայ յենուելով.

«Այն ժամանակները Արովեանների տնից